ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/10

ք. Երևան «13» 04 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բագրատ Գինոյան Գարեգինի>> ԱՁ, ի դեմս տնօրեն Բ. Գինոյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նյութական արժեքների գնահատման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամնակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 90 000 (իննսուն հազար) ՀՀ դրամ ներառյան ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածով նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎՀՀ 900011011724 ՀՎՀՀ 02565827	<<Բագրատ Գինոյան Գարեգինի>> ԱՁ ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Մարտունի, Երևանյան 42/39 «Արդշինբանկ» ՓԲԸ 240000112690010 82063994
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	Բ. Գինոյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«13» 04 2022 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/10 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	ժամկետը
1	73432100-1	դրամ	90 000	1	ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական 3-րդ շենք, 4-րդ հարկ	2-րդ եռամսյակ 2022թ.

Տեխնիկական բնութագիր

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հաշվեկշռում հաշվառված, ՀՀ-քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի N 199-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի գույքագրման աշխատանքների արդյունքում հայտնաբերված, հետագա շահագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցների /համաձայն ցանկի/ շուկայական արժեքի գնահատման ծառայություններ:

ՑԱՆԿ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հաշվեկշռում հաշվառված, չօգտագործվող և հետագա պիտանելիության որոշման ենթակա գույքի նյութական արժեքների գնահատման ծառայությունների

Հ/Հ	Գույքային համար	Գույքի անվանումը և համառոտ բնութագիրը	Քանակը	Միավորի գին	Գումար	Ձեռքբերման ամսաթիվը
1	355-0002	Սառնարան Սվյագա	1.0	11,319	11,319	1/1/1985
2	355-0009	Կոնդիցիոներ HITACHI RAS 18CH	1.0	468,800	468,800	22/08/2006
3	355-0013	Համակարգիչ P4, video card 128MB, FGG, CD-ROM	1.0	314,700	314,700	21/03/2006
4	355-0014	Համակարգիչ P4, video card 128MB, FGG, CD-ROM	1.0	314,700	314,700	21/03/2006
5	355-0015	Համակարգիչ P4, video card 128MB, FGG, CD-ROM	1.0	314,700	314,700	21/03/2006
6	355-0024	Հեռուստացույց LG 29 FB 75	1.0	229,250	229,250	27/12/2006
7	355-0026	Կոնդիցիոներ Samsung	1.0	453,600	453,600	27/12/2006
8	355-0053	Տպիչ լազերային, պատճ. մեքենա, սկաներ MF 3245 Sagem	1.0	110,200	110,200	21/12/2007
9	355-0054	Տպիչ լազերային, պատճ. մեքենա, սկաներ MF 3245 Sagem	1.0	110,200	110,200	21/12/2007
10	355-0061	Մոնիտոր Viewsonic 22 LCD	1.0	153,500	153,500	22/07/2008

11	355-0122	Գորգ 2x6 չափսի	1.0	1,725	1,725	1/1/1989
12	355-0129	Լրագրասեղան	1.0	180,000	180,000	30/12/2006
13	355-0157	Գրասենյակային աթոռ	1.0	19,823	19,823	25/12/2008
14	355-0158	Գրասենյակային աթոռ	1.0	19,848	19,848	25/12/2008
15	355-0195	Գրասենյակային աթոռ	1.0	19,848	19,848	25/12/2008
16	355-0196	Գրասենյակային աթոռ	1.0	19,848	19,848	25/12/2008
17	355-0197	Գրասենյակային աթոռ	1.0	19,848	19,848	25/12/2008
18	355-0242	Գրասենյակային բազկաթոռ պտտվող	1.0	48,148	48,148	25/12/2008
19	355-0268	Գրասենյակային աթոռ խորհրդակցությունների	1.0	90,000	90,000	20/12/2008
20	355-0275	Գրասենյակային աթոռ	1.0	13,000	13,000	20/08/2008
21	355-0278	Գրասենյակային աթոռ	1.0	13,000	13,000	20/12/2008
22	355-0281	Գրասենյակային աթոռ	1.0	13,000	13,000	20/12/2008
23	355-0282	Գրասենյակային աթոռ	1.0	13,000	13,000	20/12/2008
24	355-0285	Գրասենյակային աթոռ	1.0	33,000	33,000	29/08/2008
25	355-0286	Գրասենյակային աթոռ	1.0	33,000	33,000	29/08/2008
26	355-0288	Գրասենյակային աթոռ	1.0	33,000	33,000	29/08/2008
27	355-0289	Գրասենյակային աթոռ	1.0	33,000	33,000	29/08/2008
28	355-0290	Գրասենյակային աթոռ	1.0	33,000	33,000	29/08/2008
29	355-0291	Գրասենյակային աթոռ	1.0	33,000	33,000	29/08/2008
30	355-0292	Գրասենյակային աթոռ	1.0	33,000	33,000	29/08/2008
31	355-0297	Գրասենյակային աթոռ	1.0	21,000	21,000	29/08/2008
32	355-0298	Գրասենյակային աթոռ	1.0	21,000	21,000	29/08/2008
33	355-0327	Անխափան սնուցման սարք UPS POWER COM BNT600 AP	1.0	18,530	18,530	18/08/2012
34	355-0329	Անխափան սնուցման սարք UPS POWER COM BNT600 AP	1.0	18,530	18,530	18/08/2012
35	355-0339	Թվային տեսախցիկ-2.7", 12.1 պիքսել, 25X	1.0	150,000	150,000	5/12/2012
36	355-0340	Թվային ֆոտոխցիկ	1.0	130,000	130,000	5/12/2012
37	355-0341	Ձայնագրիչ DVD ռեկորդեր	1.0	170,000	170,000	5/12/2012
38	355-0342	Ձայնագրող սարք (դիկտաֆոն)	1.0	71,800	71,800	5/12/2012
39	363-0009	Տպիչ լազերային	1.0	239,000	239,000	22/12/2003

40	363-0019	Պրոյեկտոր LCG Projector Mitsubishi	1.0	1,217,600	1,217,600	18/11/2004
41	363-0020	Համակարգիչ P4 3200, HDD 80GB, DDR 512MB	1.0	382,500	382,500	11/7/2005
42	363-0026	Համակարգիչ P4 2.0 GHz	1.0	197,300	197,300	26/12/2005
43	363-0029	Տպիչ շիթային HP deskjet 1180cA3 600 dpi	1.0	145,700	145,700	10/2/2006
44	363-0093	Համակարգիչ P4 videocard, Mouse	1.0	275,400	275,400	27/12/2006
45	363-0104/3	Անխափան սնուցման սարք UPS	1.0	24,500	24,500	1/1/2007
46	363-0343	Անխափան սնուցման սարք UPS E-pro 600 VA	1.0	15,500	15,500	25/08/2008
47	363-1340/3	Անխափան սնուցման սարք UPS 650VA	1.0	20,000	20,000	7/7/2014
48	363-0438	Համակարգիչ P4, 3,4GHz	1.0	180,600	180,600	25/12/2008
49	363-0543	Անխափան սնուցման սարք UPS E-pro 800 VA	1.0	27,600	27,600	28/07/2010
50	363-0614	Անխափան սնուցման սարք UPS	1.0	30,000	30,000	7/7/2011
51	363-0617	Անխափան սնուցման սարք UPS	1.0	30,000	30,000	7/7/2011
52	363-0623	Անխափան սնուցման սարք UPS	1.0	30,000	30,000	7/7/2011
53	363-0632	Անխափան սնուցման սարք UPS	1.0	30,000	30,000	7/7/2011
54	363-0652	Սառնարան Օրսկ	1.0	368	368	25/04/1991
55	363-0694	Պատճենահանող սարք	1.0	210,000	210,000	22/12/2003
56	363-0700	Պատճենահանող սարք Canon FC-108	1.0	166,500	166,500	11/7/2005
57	363-0702	Պատճենահանող սարք Canon MF-3110	1.0	174,800	174,800	21/03/2006
58	363-0703	Հեռուստացույց HITACHI	1.0	93,500	93,500	6/6/2006
59	363-0731	Ռադիատոր (տաքացուցիչ) DELONGHI	1.0	42,750	42,750	27/12/2006
60	363-0733	Ռադիատոր (տաքացուցիչ) DELONGHI	1.0	42,750	42,750	27/12/2006
61	363-0742	Կոնդիցիոներ Sanyo SAPS 124 GHMC	1.0	316,000	316,000	16/08/2007
62	363-0749	Կոնդիցիոներ Sanyo SAPS 96 GHMC	1.0	276,000	276,000	16/08/2007
63	363-0759	Ռադիատոր (տաքացուցիչ) ALONSA AL120/04	1.0	38,950	38,950	13/12/2007
64	363-0760	Ռադիատոր (տաքացուցիչ) ALONSA AL120/04	1.0	38,950	38,950	13/12/2007
65	363-0770	Ռադիատոր (տաքացուցիչ) ALONSA AL120/04	1.0	38,950	38,950	13/12/2007
66	363-0829	Ռադիատոր (տաքացուցիչ) Super General SG OR9	1.0	26,250	26,250	23/12/2008
67	363-0831	Ձայնագրիչ OLIMPUS WS-110	1.0	47,500	47,500	29/12/2008

68	363-0834	Թվային տեսախցիկ SONY DCR_DVD 910	1.0	280,800	280,800	9/4/2010
69	363-0838/10	Շերտավարագույր ուղղահայաց	1.0	50,000	50,000	19/09/2011
70	363-0838/11	Շերտավարագույր ուղղահայաց	1.0	50,000	50,000	19/09/2011
71	363-0838/13	Շերտավարագույր ուղղահայաց	1.0	50,000	50,000	19/09/2011
72	363-0838/6	Շերտավարագույր ուղղահայաց	1.0	55,000	55,000	19/09/2011
73	363-0838/9	Շերտավարագույր ուղղահայաց	1.0	50,000	50,000	19/09/2011
74	363-0847	Ուղեգորգ 1.5x5 չափսի	1.0	48,440	48,440	1/1/1981
75	363-0853	Ուղեգորգ միջանցքում 1,5x5.45 չափսի	1.0	68,847	68,847	1/7/1981
76	363-0854	Ուղեգորգ միջանցքում 1,5x6.3 չափսի	1.0	75,587	75,587	1/7/1981
77	363-0855	Ուղեգորգ միջանցքում 1,5x13.3 չափսի	1.0	168,018	168,018	1/7/1981
78	363-0858	Ուղեգորգ 1.5x1.26 չափսի	1.0	205	205	1/1/1989
79	363-0859	Ուղեգորգ 1.5x2.45 չափսի	1.0	399	399	1/1/1989
80	363-0860	Ուղեգորգ 1.5x2.75 չափսի	1.0	448	448	1/1/1989
81	363-0861	Ուղեգորգ 1.5x3 չափսի	1.0	489	489	1/1/1989
82	363-0862	Ուղեգորգ 1.5x6 չափսի	1.0	978	978	1/1/1989
83	363-0865	Ուղեգորգ 1.5x3 չափսի	1.0	489	489	1/1/1989
84	363-0874	Ուղեգորգ 1.5x4.19 չափսի	1.0	684	684	1/1/1989
85	363-0875	Ուղեգորգ 1.5x5 չափսի	1.0	815	815	1/1/1989
86	363-0881	Ուղեգորգ 1.5x4.19 չափսի	1.0	684	684	1/1/1989
87	363-0882	Ուղեգորգ 1.5x2.8 չափսի	1.0	456	456	1/1/1989
88	363-0883	Ուղեգորգ 1.5x2.19 չափսի	1.0	358	358	1/1/1989
89	363-0884	Ուղեգորգ 1.5x2.8 չափսի	1.0	456	456	1/1/1989
90	363-0885	Ուղեգորգ 1.5x4.84 չափսի	1.0	790	790	1/1/1989
91	363-0901	Ուղեգորգ 3,43	1.0	741	741	20/01/1989
92	363-0902	Գորգ 2x6 չափսի	1.0	1,725	1,725	20/01/1989
93	363-0905	Գորգ 1,5x2 չափսի	1.0	236	236	20/01/1989
94	363-0924	Գրասենյակային բազկաթոռ	1.0	109,250	109,250	4/9/2003
95	363-0978	Գրասենյակային բազկաթոռ ղեկավարի	1.0	85,000	85,000	26/12/2007

96	363-0986	Դրասենյակային բազկաթոռ պտտվող	1.0	48,149	48,149	25/12/2008
97	363-0987	Դրասենյակային բազկաթոռ պտտվող	1.0	48,148	48,148	25/12/2008
98	363-0989	Դրասենյակային բազկաթոռ պտտվող	1.0	48,148	48,148	25/12/2008
99	363-0990	Դրասենյակային բազկաթոռ պտտվող	1.0	48,148	48,148	25/12/2008
100	363-0992	Դրասենյակային բազկաթոռ պտտվող	1.0	48,148	48,148	25/12/2008
101	363-1173	Անխափան սնուցման սարք UPS Power-Com BNT 800 AP	1.0	23,146	23,146	9/1/2012
102	363-1178	Համակարգիչ սերվեր intel Core i5-2300	1.0	400,000	400,000	1/4/2012
103	363-1196	Թվային ֆոտոխցիկ	1.0	130,000	130,000	5/12/2012
104	363-1214	Անխափան սնուցման սարք UPS POWER COM BNT600 AP	1.0	18,531	18,531	18/08/12
105	363-1229	Թվային ֆոտոխցիկ	1.0	130,000	130,000	5/12/2012
106	363-1342/2	Մոնիտոր Philips	1.0	60,000	60,000	7/7/2014
107	724-0017	UPS 600VA E-pro	1.0	19,760	19,760	1/1/2007
108	724-0019	UPS 800VA E-pro	1.0	27,600	27,600	28/07/2010
109	724-0024	UPS 800VA E-pro	1.0	27,600	27,600	28/07/2010
110	724-0073	Համակարգիչ Core 2Duo C E 7500 H 160 GB R 2 GB	1.0	253,800	253,800	25/11/2011
111	724-0075	Համակարգիչ Core 2Duo C E 7500 H 160 GB R 2 GB	1.0	161,600	161,600	25/11/2011
112	724-0076	Համակարգիչ Core 2Duo C E 7500 H 160 R 2 GB	1.0	253,800	253,800	27/08/2010
113	724-0077	Համակարգիչ Core 2Duo C E 7500 H 160 GB R 2 GB	1.0	161,600	161,600	25/11/2011
114	724-0149	Թուղթ մանրացնող սարք	1.0	38,750	38,750	22/01/2007
115	724-0150	Ջեռուցիչ Super General	1.0	26,250	26,250	23/12/2008
116	724-0151	Ջեռուցիչ Super General	1.0	26,250	26,250	23/12/2008
117	724-0174	Գորգ 1.5 մետր 15.5մ	1.0	42,935	42,935	1/1/1991
118	724-0175	Գորգ Էրեբունի	1.0	79,643	79,643	1/1/1989
119	724-0176	Գորգ Էրեբունի	1.0	143,358	143,358	1/1/1981
120	724-0177	Գորգ Էրեբունի 1.5 մետր 14 մ	1.0	135,632	135,632	1/1/2003
121	724-0178	Գորգ Էրեբունի 1.5 մետր 14 մ	1.0	176,568	176,568	1/1/2003
122	724-0179	Գորգ Էրեբունի 1.5 մետր 2.7մ	1.0	344	344	1/1/2003
123	724-0180	Գորգ Էրեբունի 1.5 մետր 3.8	1.0	63,061	63,061	1/1/1997

124	724-0184	Բազկաթոռ	1.0	63,000	63,000	17/12/2007
125	724-0187	Բազկաթոռ պտտվող	1.0	48,149	48,149	25/12/2008
126	724-0189	Բազկաթոռ պտտվող	1.0	48,149	48,149	25/12/2008
127	724-0190	Բազկաթոռ պտտվող	1.0	48,149	48,149	25/12/2008
128	724-0229	Երկգզրանոց սեղան	1.0	109,092	109,092	25/12/2008
129	724-0261	Խորհրդակցական սեղան	1.0	566	566	1/1/2003
130	ՓՀՄ-00017	Կավրոլին 26քմ	1.0	169,995	169,995	31/12/2015
131	ՓՀՄ-00031	Հեռախոս ինտերնետ կապի D-Link-150 S	1.0	21,000	21,000	31/12/2015
132	ՓՀՄ-00041	Շերտավարագույր ուղղահայաց 13քմ	2.0	160,714	321,428	31/12/2015
133	ՓՀՄ-00045	Ուղեգորգ 26.3քմ	1.0	5,628	5,628	31/12/2015
134	ՓՀՄ-00047	Ուղեգորգ 3.2քմ	1.0	658	658	31/12/2015
135	ՓՀՄ-00053	Ուղեգորգ 4.8քմ	1.0	1,027	1,027	31/12/2015
136	ՓՀՄ-00054	Ուղեգորգ 5քմ	1.0	1,070	1,070	31/12/2015
137	ՓՀՄ-00062	Պատի ժամացույց	1.0	5,000	5,000	31/12/2015
138	ՓՀՄ-00067	Փայտե աթոռներ կոշտ թիկնակով	2.0	24,000	48,000	31/12/2015
139	ՓՀՄ-00070	Թեյի պատրաստման էլեկտրական սարք	1.0	10,000	10,000	15/02/2017
140	ՓՀՄ-00079	Տաքացուցիչ փչող Timberk TEH S200SS.G	4.0	30,800	123,200	15/02/2017
141	ՓՀՄ-00080	Տաքացուցիչ Ardes AR4FO2B	6.0	73,800	442,800	15/02/2017
142	ՓՀՄ-00088	Աթոռ փափուկ	7.0	1,584	11,088	15/02/2017
143	355-0012	Համակարգիչ P4, video card 128MB, FGG, CD-ROM	1.0	314,700	314,700.0	21/03/2006
144	355-0128	Գրասենյակային սեղան խորհրդակցությունների	1.0	600,000	600,000.0	31/12/2006
145	355-0150	Գրասենյակային սեղան խորհրդակցությունների	1.0	465,000	465,000.0	20/12/2007
146	355-0270	Գրասենյակային սեղան խորհրդակցությունների	1.0	423,000	423,000.0	27/08/2008
147	355-0307	Տակդիր հեռուստացույցի	1.0	33,000	33,000.0	29/08/2008
148	363-0280	Մոնիտոր DELL LCD 17	1.0	92,500	92,500.0	30/08/2008
149	363-0281	Տպիչ լազերային, պատճ. մեքենա, սկաներ Canon MF4010	1.0	93,600	93,600.0	30/07/2008
150	363-0284	Մոնիտոր DELL LCD 17	1.0	92,500	92,500.0	30/07/2008
151	363-0606	Անխափան սնուցման սարք UPS	1.0	30,000	30,000.0	7/7/2011

152	363-0624	Անխափան սնուցման սարք UPS	1.0	30,000	30,000.0	7/7/2011
153	363-0701	Պատճենահանող սարք Canon MF-3110	1.0	19,760	19,760.0	21/03/2006
154	724-0085	Համակարգիչ Core 2Duo,CPU E 8400,HDD 320GB. RAM 1GB	1.0	253,800	253,800	28/07/2010
		Ընդամենը	170.0	15,154,990.0	15,810,608.0	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Բագրատ Գինոյան Գարեգինի>> ԱՁ
ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Մարտունի,
Երևանյան 42/39
«Արդշինբանկ» ՓԲԸ
240000112690010
82063994

Տնօրեն՝

Բ. Գինոյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«13» 04 2022 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/10 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	73432100-1	նյութական արժեքների գնահատման ծառայություններ	-	-	-	90 000	90 000	90 000	90 000	90 000	90 000	90 000	90 000	90 000	90 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Բագրատ Գինոյան Գարեգինի>> ԱՁ
ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Մարտունի,
Երևանյան 42/39
«Արդշինբանկ» ՓԲԸ
240000112690010
82063994

Տնօրեն՝

_____ Բ. Գինոյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 3
«13» 04 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/10 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«13» 04 2022 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/10 գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն